Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/1609/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23 մայիսի 2023 թվականի ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր **Մարինա Տաշչյանի** (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով հայցվոր «Քյավառ Սերվիս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Քյավառ Սերվիս» ՍՊ ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանի միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով 10.03.2023 թվականին հայտարարված թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/1Ս» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2023 թվականից 14.04.2023 թվականը տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ 1-ին չափաբաժնի մասով «Հովհաննես Մարտիրոսյան» անհատ ձեռնարկատիրոջը որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Ա. Սաֆարյանին:

03.05.2023 թվականի Դատարանի որոշմամբ հայցադիմումը կից փաստաթղթերով վերադարձվել է հայցվորին՝ հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելու և կրկին դատարան ներկայացնելու համար:

15.05.2023 թվականին հայցվորը Դատարանի 03.05.2023 թվականի որոշման մեջ նշված թերությունները վերացնելուց հետո կրկին Դատարան է ներկայացրել հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Մարինա Տաշչյանին:

Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով դատավորին է հանձնվել 19.05.2023 թվականին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ,ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Տվյալ դեպքում, Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ/4396/02/23 քաղաքացիական գործով պետք է նշանակել եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.9-րդ հոդվածների պահանջներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Քյավառ Սերվիս» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանի միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով 10.03.2023 թվականին հայտարարված թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/1Ս» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2023 թվականից 14.04.2023 թվականը տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ 1-ին չափաբաժնի մասով «Հովհաննես Մարտիրոսյան» անհատ ձեռնարկատիրոջը որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ/1609/02/23 քաղաքացիական գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 22.0606.2023 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ՄԱՐԻՆԱ ՏԱՇՉՅԱՆ**